

ԿԱՐԾԻՔ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

Նարեկ Նաիրիի Կարապետյանի Ը.00.03՝ «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի համար ներկայացված «Ներքին պետական պարտքի ազդեցությունը ֆինանսական համակարգի զարգացման վրա Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Նարեկ Կարապետյանի ատենախոսությունը նվիրված է ՀՀ ֆինանսական համակարգի և ֆինանսական միջնորդության վրա ներքին պետական պարտքի ազդեցությունների գնահատմանը և բացասական ազդեցությունների նվազեցմանն ուղղված պարտքի կառավարման քաղաքականության բարելավման ուղիների բացահայտմանը:

Ներքին պետական պարտքի և ֆինանսական համակարգի փոխառնչությունների հարցերը աստիճանաբար էլ ավելի արդիական են դառնում Հայաստանի Հանրապետությունում: Հարցի կարևորությունը ավելի է բարձրացել 2020թ.-ի համավարակի և Արցախյան պատերազմի ցնցումներից հետո, որոնց ազդեցության պայմաններում ֆինանսական շուկայից 2020թ.-ին ՀՀ կառավարությունը ներգրավել է շուրջ 300, իսկ 2021թ.-ին՝ 240 մլրդ դրամի միջոցներ, իսկ պարտքի կառավարման ռազմավարությունը նախատեսում է, որ ներքին աղբյուրների հիման վրա պակասուրդի ֆինանսավորման միտումը պետք է պահպանվի: Ընդ որում, պայմանավորված բանկերի շուրջ ֆինանսական համակարգի կենտրոնացվածությամբ, հենց բանկերին է բաժին հասել թողարկված պարտատոմսերում ներդրումների մեծ մասը:

Սակայն հայտնի է, որ մեկ ֆինանսական գործիքի, այդ թվում՝ պետական պարտատոմսերի շուրջ կենտրոնացումը ոչ միայն ֆինանսական կայունության ռիսկեր է առաջացնում, այլև կարող է հանգեցնել վարքագծային փոփոխությունների՝ նվազեցնելով տնտեսության իրական հատվածի ֆինանսավորման խթանները կամ այլ կերպ ասած՝ «ծուլացնելով» ֆինանսական ինստիտուտներին: Մյուս կողմից, հաշվի առնելով կորպորատիվ արժեթղթերի շուկայի զարգացման ներկա մակարդակը, պետական պարտատոմսերը կարևոր դերակատարում ունեն ֆինանսական համակարգում՝ օժանդակելով ոչ բանկ ֆինանսական ինստիտուտների

զարգացմանը, դրամավարկային քաղաքականության իրականացմանը, բանկերի ռիսկերի կառավարմանը և այլն, ինչը նշանակում է, որ պետական պարտատոմսերի շրջանառության որոշակի ծավալի առկայությունը անհրաժեշտ է: Սակայն որքան է օպտիմալ չափը՝ հնարավոր չէ որոշել որևէ հանրաճանաչ «բուֆ մատի» կանոնով, և անհրաժեշտ են մանրամասն գնահատումներ և վերլուծություններ:

Հեղինակը այս երկընտրանքի ու գիտական դաշտում դրա շուրջ առկա քննարկման («ծույլ բանկերի» և «ապահով ակտիվի» հիպոթեզներ) շուրջ է կենտրոնացրել ատենախոսությունը՝ ձևավորելով բանկերի մակարդակի տվյալների բազա և կատարելով էկոնոմետրիկ գնահատումներ, ինչպես նաև վերլուծելով պետական պարտքի առաջնային և երկրորդային շուկաները:

Նշված հիմնախնդիրների գիտական հետազոտման և լուծումների մշակմանն ուղղված Նարեկ Կարապետյանի ատենախոսությունը համարում ենք արդիական, իսկ արդյունքները՝ կարևոր:

Ատենախոսության նպատակը և խնդիրները: Ատենախոսության նպատակը ՀՀ ֆինանսական համակարգի և ֆինանսական միջնորդության վրա ներքին պետական պարտքի ազդեցությունների գնահատումն է և բացասական ազդեցությունների նվազեցմանն ուղղված պարտքի կառավարման քաղաքականության բարելավման ուղիների բացահայտումը: Ելնելով սահմանված նպատակից, ատենախոսության մեջ առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- Ուսումնասիրել պետական պարտքին և ներքին պետական պարտքի շուկայի զարգացմանը վերաբերող տեսական մոտեցումներն ու առավել նշանակալի հետազոտությունները,
- Ուսումնասիրել ֆինանսական համակարգի զարգացմանը, ինչպես նաև ներքին պետական պարտքի և ֆինանսական համակարգի զարգացման փոխառնչություններին վերաբերող տեսությունները և հետազոտությունները,
- Վերլուծել ՀՀ-ում ներքին պետական պարտքի զարգացումները և դրանք պայմանավորող գործոնները,
- Վերլուծել ֆինանսական միջնորդության միտումները ՀՀ-ում՝ կենտրոնանալով բանկային համակարգի զարգացումների վրա,
- Վերլուծել ՀՀ պետական պարտատոմսերում ՀՀ բանկային համակարգի ներդրումների կառուցվածքը (ըստ բանկերի), դրա առանձնահատկությունները և միտումները,

- Գնահատել ՀՀ պետական պարտատոմսերում ՀՀ առևտրային բանկերի ներդրումների վրա ազդող գործոնները,
- Գնահատել ՀՀ պետական պարտատոմսերում ՀՀ առևտրային բանկերի ներդրումների ազդեցությունները վերջիններիս ֆինանսական ցուցանիշների վրա,
- Ուսումնասիրել ՀՀ-ում վարվող պարտքի կառավարման քաղաքականությունը և վերլուծել պարտքի առաջնային և երկրորդային շուկաների զարգացումները, գնահատել դրանց զարգացման մակարդակը և ազդող գործոնները,
- Բացահայտել ՀՀ պետական պարտատոմսերի առաջնային շուկայի գործակալի ինստիտուտի առանձնահատկությունները ՀՀ-ում, ներկայացնել դրա բարելավմանն ուղղված առաջարկություններ,
- Ուրվագծել ՀՀ պետական պարտատոմսերի շուկայի զարգացման առաջնահերթությունները և առաջարկել դրանց ներքո պարտքի կառավարման քաղաքականության լավարկման ուղիներ:

Ատենախոսության կառուցվածքը և բովանդակությունը

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և առաջարկություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Ատենախոսությունը բաղկացած է 138 էջից:

Ատենախոսության «**Ներածություն**» բաժնում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ձևակերպվել են հետազոտության օբյեկտն ու առարկան, նպատակը, խնդիրները, տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, հիմնական արդյունքները, գիտական նորոյթները, դրանց գործնական նշանակությունը, աշխատանքի կառուցվածքը:

Հետազոտության առաջին՝ «**Ներքին պետական պարտքի և ֆինանսական զարգացման տեսամեթոդաբանական հիմնահարցեր**» գլխում ներկայացվել են պետական պարտքի վերաբերյալ հիմնական տեսությունները, մասնագիտական մոտեցումներն ու հիմնարար հետազոտություններն այս ոլորտում, ինչպես նաև քննարկվել են ներքին պետական պարտքի դերի և ռիսկերի, զարգացող երկրների ներքին պետական պարտքի շուկայի զարգացման կարևորության և այդ գործընթացի առանձնահատկությունների, երկրի ֆինանսական համակարգի զարգացումը պայմանավորող գործոնների վերաբերյալ տեսական հիմնահարցերը:

Առաջին ենթագլխում ատենախոսը առանձնացրել է տեսաբանների շրջանում առկա համակարծիությունները ներքին պետական պարտքի վերաբերյալ, և եզրակացրել, որ դրա պատշաճ կիրառումը կարող է ոչ միայն ամրապնդել հարկաբյուջետային կայունությունը, այլև հիմքեր ստեղծել ֆինանսական շուկաների զարգացման համար:

Երկրորդ ենթագլխում մասնագիտական գրականության ուսումնասիրությամբ առանձնացվել են պետական պարտատոմսերի շուկայի զարգացման վրա ազդող գործոնները և զարգացման համար անհրաժեշտ պայմանները:

Երրորդ ենթագլխում ուսումնասիրվել են ֆինանսական համակարգի զարգացման վրա ազդող գործոնները և դրանց շարքում՝ ներքին պետական պարտքի դերակատարումը, և ատենախոսը եզրակացրել է, որ ներքին պետական պարտքի ազդեցությունը ֆինանսական համակարգի վրա դրական կարող է լինել մինչև որոշակի շեմ, որից հետո փոխվել բացասականի, իսկ երկրի մակարդակով այդ ազդեցության բնույթը բացահայտելու արդյունավետ մոտեցում են միկրո մակարդակի գնահատումները: Այս գլխում գիտական նորույթ չի ձևավորվել:

Ատենախոսության երկրորդ՝ **«Ներքին պետական պարտքի և ֆինանսական համակարգի զարգացման փոխառնչությունները ՀՀ-ում»** գլխում քննարկվել են ՀՀ ներքին պետական պարտքը և դրա ձևավորմանը նպաստող գործոնները, ՀՀ ֆինանսական համակարգը և պետական պարտատոմսերում դրա ներդրումային հնարավորությունները, ինչպես նաև պետական պարտատոմսերում ՀՀ առևտրային բանկերի ներդրումները, դրանց կառուցվածքն ու ազդեցությունները վերջիններիս գործունեության վրա:

Առաջին ենթագլխում քննարկվել են ՀՀ կառավարության պարտքի օպտիմալ կառուցվածքի ձևավորման հիմնախնդիրները, ուսումնասիրվել են ՀՀ ներքին պետական պարտքի զարգացումները և գնահատվել դրանց վրա ազդող գործոնները: Ատենախոսը եզրակացրել է, որ ներքին պարտքի աճի վրա ազդում են պետական պարտատոմսերի և՛ առաջարկի, և պահանջարկի գործոններ: Այս ենթագլխում հիմնավորվել է ատենախոսության առաջին գիտական նորույթը:

Երկրորդ ենթագլխում քննարկվել են ՀՀ ֆինանսական համակարգի զարգացումները և պետական պարտատոմսերում ՀՀ ֆինանսական կազմակերպությունների ներդրումները: Ենթագլխում ուսումնասիրությունը առավելապես կենտրոնացվել է բանկային համակարգի զարգացումների վրա՝ դիտարկելով տոկոսադրույքները, դոլարայնացումը, ֆինանսական կայունության ցուցանիշները և այլն: Ատենախոսը եզրակացրել է, որ ՀՀ առևտրային բանկերի

ներդրումային հնարավորությունները վերջին տասնամյակում շեշտակի ընդլայնվել են, սակայն դրա տեմպը դանդաղել է վերջին տարիներին:

Երրորդ ենթագլխում ներկայացվել է ատենախոսի կողմից ստեղծված՝ բանկերի մակարդակով տվյալների բազան, որի հիման վրա գնահատվել են պետական պարտատոմսերում բանկերի ներդրումների վրա ազդող գործոնները և պետական պարտոմսերում էկոնոմետրիկ մոդելներով գնահատվել է ներդրումների ազդեցությունը բանկերի շահութաբերության և վարկավորման ծավալի վրա: Հիմնվելով այդ գնահատականների վրա, ատենախոսը եզրակացրել է, որ պետական պարտատոմսերի շուկայի հետագա խորացումը կարող է բանկային համակարգում կառուցվածքային փոփոխությունների ռիսկեր առաջացնել, քանի որ արդեն իսկ առկա է պարտատոմսերում ներդրումների որոշակի կենտրոնացվածություն, իսկ առավել բարձր կենտրոնացվածություն ունեցող բանկերի փորձը ցույց է տալիս, որ այդպիսի ռազմավարությունը շահութաբերության աճ է ապահովում: Այս ենթագլխում հիմնավորվել է ատենախոսության երկրորդ գիտական նորույթը:

Ատենախոսության երրորդ՝ **«ՀՀ պետական պարտատոմսերի շուկայի զարգացման հնարավորությունները և հեռանկարները»** գլխում քննարկվել են ՀՀ պետական պարտատոմսերի շուկայի զարգացման և պարտքի կառավարման քաղաքականության հիմնահարցերը, ինչպես նաև ուրվագծվել են ՀՀ պետական պարտատոմսերի շուկայի զարգացման քաղաքականության առաջնահերթություններն, ու, հիմնվելով դրանց վրա, առաջարկվել պետական պարտատոմսերի շուկայի հաշվեկշռված զարգացում ապահովելու ուղիներ:

Առաջին ենթագլխում քննարկվել են իրականացվող պարտքի կառավարման և հարկաբյուջետային քաղաքականությունների հիմքերը, ինչպես նաև վերլուծվել է առաջնային շուկան (ներառյալ՝ առաջնային շուկայի գործակալների ինստիտուտը), երկրորդային շուկան և ներդրողների համախումբը (բազան): Էկոնոմետրիկ մոդելով գնահատվել են առաջնային շուկայում պարտատոմսերի պահանջարկի վրա ազդող գործոնները, ինչպես նաև, հիմք ընդունելով ԱՄՀ և ՀԲ մեթոդաբանությունը, գնահատվել է առաջնային շուկայի զարգացման մակարդակը: Այնուհետև գնահատվել են երկրորդային շուկայի շրջանառության մակարդակի վրա ազդող գործոնները և երկրորդային շուկայի և ներդրողների համախմբի զարգացման մակարդակը: Ատենախոսը եզրակացրել է, որ առաջնային շուկան զարգացման ամենաբարձր մակարդակում է գտնվում, թեպետ մեծապես կախված է բանկային համակարգի զարգացումներից, իսկ երկրորդային շուկան՝ զարգացման ավելի ցածր փուլում է, ինչը համապատասխանում է ներդրողների համախմբի բևեռվածությանը:

ըստ բանկային և ոչ բանկային հատվածների: Այս ենթագլխում են հիմնավորվել երրորդ և չորրորդ գիտական նորույթները:

Երկրորդ ենթագլխում առանձնացվել են պետական պարտատոմսերի շուկայի զարգացման առաջնահերթություններ, ինչպես նաև տրվել են առաջնային շուկայի գործակալի ինստիտուտի կատարելագործման հնարավորությունները: Ատենախոսը, պետական պարտքի կառավարման և ֆինանսական հատվածի իրականացվող քաղաքականությունների, բացահայտված ռիսկերի, զարգացման գնահատված նախապայմանների, շուկայի զարգացման ճեղքերի համատեքստում առաջարկել է երեք հիմնական առաջնահերթություններ՝ պետական բյուջեի պակաստրդի կառուցվածքում ներքին աղբյուրների բարձր կշռի ապահովում, երկրորդային շուկայի խորության և իրացվելիության ավելացում, ներդրողների համախմբի ընդլայնում ոչ ռեզիդենտ ներդրողների հաշվին: Յուրաքանչյուր առաջնահերթության հետ կապված ուրվագծվել են հնարավոր միջոցառումներ, ինչպես նաև տրվել են առաջնային շուկայի գործակալի ինստիտուտի բարելավման հնարավոր ուղղությունները: Սույն ենթագլխի արդյունքներից գիտական նորույթ չի ձևակերպվել:

«Եզրակացություններ և առաջարկություններ» բաժնում ամփոփվել են ատենախոսության հիմնական արդյունքները:

Ատենախոսության ստացված արդյունքների հավաստիությունն ու դրանց գործնական նշանակությունը

Հետազոտության համար տեսական հիմք են հանդիսացել հեղինակավոր մասնագետների աշխատությունները, իսկ տեղեկատվական հիմքեր՝ պաշտոնական գերատեսչությունների, միջազգային կազմակերպությունների, հաշվետվությունները, տեղեկագրերն ու տվյալների բազաները, ինչպես նաև ՀՀ առևտրային բանկերի ֆինանսական հաշվետվությունները, իսկ դրանց վերլուծության համար կիրառվել են տվյալների վերլուծության հայտնի մեթոդներ և գործիքներ, ինչը պայմանավորում է ստացված արդյունքների հավաստիությունը:

Հետազոտության օբյեկտ է ճանաչվել ՀՀ ներքին պետական պարտքի և ֆինանսական համակարգի փոխառնչությունները, իսկ հետազոտության առարկա՝ ՀՀ ֆինանսական համակարգի վրա ներքին պետական պարտքի ազդեցության գնահատումը: Հետազոտության արդյունքները կարող են կիրառվել պարտքի կառավարման և հարկաբյուջետային քաղաքականությունների մշակման և իրականացման գործընթացում՝ ՀՀ ֆինանսների նախարարության, ՀՀ կենտրոնական բանկի և այլ մարմինների կողմից: Հետազոտության արդյունքները կարող են կիրառվել նաև պետական պարտքի և ֆինանսական զարգացման հետազոտություններով զբաղվող մասնագետների կողմից:

Ատենախոսության գիտական արդյունքները և նորույթը

Ատենախոսության գիտական նորույթն արտահայտվել է հետևյալում.

- Հիմնավորվել է, որ ՀՀ պետական պարտքի կառուցվածքում ներքին պարտքի մասնաբաժնի ավելացումը առավելապես պարտքի կառավարման քաղաքականության արդյունավետությամբ է պայմանավորված, իսկ պարտատոմսերի պահանջարկի ազդեցությունը սահմանափակ է, բացառությամբ արժույթային ճգնաժամերի իրավիճակների, երբ ներքին պարտքի ընդլայնումը կտրուկ դանդաղել է:
- ՀՀ առևտրային բանկերից հավաքագրված տվյալների հիման վրա գնահատվել են բանկերի ներդրումային որոշումների վրա ազդող գործոնները և բացահայտվել են պետական պարտատոմսերում ներդրումների ազդեցությունը բանկերի ֆինանսական ցուցանիշների վրա:
- Ըստ առանձին ուղղությունների գնահատվել է ՀՀ պետական պարտատոմսերի առաջնային և երկրորդային շուկաների զարգացման մակարդակները, դրանց միջև առկա ճեղքը, հիմնավորվել է վերջինս նվազեցման գործում պետական պարտքի կառավարման քաղաքականության բարելավման անհրաժեշտությունը:
- Գնահատվել են ՀՀ պետական պարտատոմսերի տեղաբաշխման և երկրորդային շուկայի շրջանառության ծավալների վրա ազդող գործոններն ու առաջնային գործակալների ինստիտուտի գործունեության առաձնահատկությունները:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

1. Ատենախոսությունում պետական պարտատոմսերի շուկայի զարգացման հնարավորությունները արդարացիորեն կապվում են ֆինանսական միջնորդության խորության հետ, իսկ վերջինս դիտվում է այլ զարգացող երկրների հետ համեմատության տրամաբանության ներքո («...բանկային համակարգի միջոցով իրականացվող ֆինանսական միջնորդությունը զարգացող երկրների միջին ցուցանիշներին համադրելի մակարդակում է, ինչը հուշում է հետագա աճի սահմանափակ հնարավորությունների վերաբերյալ»): Կարծում ենք, ատենախոսությունը կշահեր, եթե ֆինանսական միջնորդության միտումները դիտվեին ֆինանսական պարբերաշրջանների տեսակետից, քանի որ ֆինանսական պարբերաշրջանի ընդլայնման և սահմանափակման (դելերիջինգի) փուլերում պետական պարտքի ազդեցությունները կարող են տարբեր ուժգնությամբ դրսևորվել:
2. Կարծում ենք, ատենախոսությունը կշահեր, եթե ներքին պետական պարտքի ազդեցությունը գնահատվեր ոչ միայն բանկային համակարգի

շահութաբերության և վարկավորման վրա, այլ նաև ընդգրկել հիմնական մակրոտնտեսական փոփոխականները, այդ թվում՝ ֆինանսական շուկայի տոկոսադրույքներ, ավանդների ծավալներ, փոխարժեք, տնտեսական աճ, քանի որ հեղինակը ներածությունում ևս նշում է, որ հետազոտության հեռահար նպատակը տնտեսության վրա հնարավոր բացասական ազդեցությունների ռիսկերը բացահայտելը և կանխարգելելն է:

3. Ատենախոսության ներածությունում նշվում է, որ քանի որ «պետական պարտատոմսեր-իրական հատվածի ֆինանսավորում» երկրնտրանքը ծառայած է բանկային համակարգի առաջ, ուսումնասիրությունը կենտրոնացվել է բանկային համակարգի և ներքին պետական պարտքի միջև փոխազդեցությունների վրա, ինչը և իրականացվել է՝ էմպիրիկ գնահատումները կատարելով բանկերի տվյալներով: Միաժամանակ, ատենախոսը եզրակացրել է, որ պետական պարտատոմսերի շրջանառության ծավալների ավելացումը նպաստում է ոչ բանկ ֆինանսական ինտիտուտների գործունեության ընդլայնմանը: Կարծում ենք, ատենախոսությունը կշահեր, եթե էմպիրիկ գնահատումներում հնարավորության սահմաններում ընդգրկվեին նաև ոչ բանկ ֆինանսական ինտիտուտների ցուցանիշներ՝ քանակական գնահատումներով ամրապնդելու վերջիններիս վերաբերյալ կատարված եզրահանգումները:
4. Ատենախոսությունում մակրո և միկրո մակարդակներում ուսումնասիրվել են ներքին պետական պարտքի ազդեցությունները ֆինանսական համակարգի շահութաբերության, չափսատող վարկերի և վարկավորման ցուցանիշների վրա: Կարծում ենք, աշխատանքը կշահեր, եթե ատենախոսը անդրադարձ կատարեր նաև պետական պարտքից ֆինանսական համակարգի վրա տարածվող ռիսկերի (օրինակ՝ պարտատոմսերի գների տատանումներից հնարավոր կորուստների) գնահատմանը և դրանց նվազեցման ուղիների բացահայտմանը:
5. Ատենախոսության առաջին գիտական նորոյթում նշվում է. «Հիմնավորվել է, որ ՀՀ պետական պարտքի կառուցվածքում ներքին պարտքի մասնաբաժնի ավելացումը առավելապես պարտքի կառավարման քաղաքականության արդյունավետությամբ է պայմանավորված...»: Մինչդեռ իրականացված վերլուծությունը ցույց է տվել, որ ներքին պարտքի մասնաբաժնի վրա ազդում է հարկաբյուջետային քաղաքականության որոշումները, իսկ պարտքի կառավարման քաղաքականության արդյունավետության վերաբերյալ քննարկում չի իրականացվում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Վերը նշված դիտողությունները չեն ազդում հետազոտության արդյունքների վրա, և հետապնդում են ներքին պետական պարտքի և ֆինանսական համակարգի փոխառնչությունների այլ ասպեկտները ևս բացահայտելու նպատակ: Նարեկ Նաիրիի Կարապետյանի՝ **«Ներքին պետական պարտքի ազդեցությունը ֆինանսական համակարգի զարգացման վրա Հայաստանի Հանրապետությունում»** թեմայով ատենախոսությունը կարելի է որակել որպես ինքնուրույն գիտական հետազոտություն, որտեղ դրված և լուծված են ՀՀ ֆինանսական համակարգի վրա ներքին պետական պարտքի ազդեցության գնահատման և պարտքի կառավարման քաղաքականության բարելավման տեսական և գործնական կարևորություն ունեցող խնդիրներ: Վերլուծության արդյունքում առաջադրված են գիտական նորոյթ պարունակող մոտեցումներ:

Հետազոտության արդյունքները քննարկված են Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում: Ատենախոսության հիմնական արդյունքներն ու բովանդակությունն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակած թվով 14 (տասնչորս) գիտական հոդվածներում՝ ՀՀ ԲՈԿ-ի պահանջներին համապատասխան և հրատակարման պահին ընդունելի, ինչպես նաև միջազգային նշանակության գրախոսվող հանդեսներում ու ժողովածուներում:

Ներկայացված սեղմագիրը կազմված է ԲՈԿ-ի պահանջներին համապատասխան և համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը և արտացոլում դրա հիմնական դրույթներն ու արդյունքները: Այսպիսով, **Նարեկ Նաիրիի Կարապետյանի՝ «Ներքին պետական պարտքի ազդեցությունը ֆինանսական համակարգի զարգացման վրա Հայաստանի Հանրապետությունում»** թեմայով պաշտպանության ներկայացված **ատենախոսությունը** համապատասխանում է «ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերի, ինչպես նաև ՀՀ ԲՈԿ-ի

կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող այլ պահանջներին, իսկ հեղինակն արժանի է **Ը.00.03** – «**Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում**» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի հայցվող գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր



Լ.Հ. Գրիգորյան
27 մայիսի 2022թ.

Լ. Հ. Գրիգորյանի ստորագրության
իսկությունը հաստատում եմ
ՀՊՏՀ-ի գիտական քարտուղար



Լ.Հ. Դարբինյան